# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

"22" օգոստոսի 2013թ. № 78-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ <<ՍՈՒՐԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏԱԹԵՎԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ, ՀԱՆՁՆՈՒՄ – ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի ա/ ենթակետով, <<Հաշվապահական հաշվառման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2013թ. օգոստոսի 21-ի <<Սուրեն Առաքելյանի անվան Տաթևի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ընտրության՝ օրենսդրության պահանջների համապատասխանության և ընտրված տնօրեն Նորվարդ Մովսիսյանի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու մասին>> N 122-Ա որոշման,

**կ ա ր գ ա դ ր ում ե մ՝**

1. 2013թ. օգոստոսի 22-ից լուծել <<Սուրեն Առաքելյանի անվան Տաթևի միջնակարգ դպրոց>>պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար Հենրիկ Հարությունյանի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. Կազմակերպությունում ակտիվների և պարտավորությունների գույքագրում, հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

| | |
|---|---|
| Կոզմանով Կառլեն | Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ) |
| Աբգարյան Մարինե | Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ |
| Այվազյան Վովա | Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ |
| Մովսիսյան Նորվարդ | <<Սուրեն Առաքելյանի անվան Տաթևի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության ՊՈԱԿ տնօրեն (ընդունող) |
| Հարությունյան Հենրիկ | <<Սուրեն Առաքելյանի անվան Տաթևի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության ՊՈԱԿ տնօրեն (հանձնող) |

3. Հանձնաժողովին՝ գույքագրման և հանձման-ընդունման աշխատանքներն ավարտել 3-օրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

4. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Վ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2013թ. օգոստոսի 22
ք. Կապան